



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 նոյեմբերի 2018 թվականի N 350-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի նոյեմբերի 21-ի N 03/17.1/9216-18 հանձնարարականը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի *Բալսահովիտ* համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N 1/32.1/727-16 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության լիազոր մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (*համաձայնությամբ*):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, իրավական և մասնագիտական հսկողության Հայաստանի Հանրապետության կառավարության

լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. *Բալախովիչ* համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո, սահմանված ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

11/26/2018

X 

VERIFIED OCSP 11/26/2018 16:30:47 GMT+4

Подписано: AVETISYAN ARNAK 1701920336

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2018 թվականի նոյեմբերի 26
ք. Հրազդան



Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

